# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 մարտի 2018 թվականի N 35-Ա**

### ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՏԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԹԵՄԱՅՈՎ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2018 թվականի հունվարի 23-ի N5-Ա որոշմամբ հաստատված պլանի 11.4-րդ կետի 11.4.1 ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2018 թվականի մարտի 26-ի N20/374 գրությունը՝

**ո ր ո շ ու մ եմ.**

1.2018թ. ապրիլի 13-ին Կապանի թիվ 9 ավագ դպրոցում անցկացնել «Կապան քաղաքում երկրաշարժի հետևանքով փլուզված թիվ 9 ավագ դպրոցում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը և անձնակազմի տարահանումը» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:

2.Ուսումնավարժության ղեկավար նշանակել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ փոխգնդապետ Ա. Սահակյանին:

3.Ուսումնավարժության ղեկավար Ա. Սահակյանին՝ ապահովել նախապատրաստական աշխատանքների իրականացումը, փաստաթղթերի մշակումը և ծանուցումը ուսումնական վարժության մասնակիցներին:

4.Ուսումնավարժությունում ընդգրկել՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժինը, «Կապանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը, «Կապանի թիվ 9 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Տաթև» մասնաճյուղը, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Սյունիքի գազաֆիկացման գազամատակարարման մասնաճյուղը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ